

ԳՓՈԹՈՐԿԵԼ ԼԻԲԱՆԱՆԱԿԱՆ ԶԳՈՐԴՆԵՐՈՒ ՄԵՋ ԼԻԲԱՆԱՆԱԿԱՆ ԶԳՈՐԴՆԵՐՈՒ ՄԵՋ ԼԻԲԱՆԱՆԱԿԱՆ ԶԳՈՐԴՆԵՐՈՒ ՄԵՋ

Լիբանանի խորհրդարանական ընտրություններն մեզ կը բաժնեն 23 օրեր: Ըստ երեւոյթին, ընտրական գործընթացը համեմատաբար աւելի հեզասահ կ'ընթանայ ոչ քրիստոնեական ընտրաշրջաններու մէջ, քան՝ քրիստոնեական: Մեթիսի ու Քեւրուանի պարագային ընտրութիւնը քաղաքական ընտրանքի գուգահեռ միաժամանակ կը կռւն անհատական բնոյթ:

Դժբախտաբար, նախընտրական քարոզչութեան մէջ, թեկնածուներուն ընտրական ելոյթներուն հետեւելով՝ համակցութեան, խաղաղ գոյակցութեան կարգախօսները իրենց դիրքերը համեմատօրէն զիջած են համայնքային ու կուսակցական նեղ հաշիւներու տեղատարափին առջեւ:

Լիբանանահայութիւնը իբրեւ հարազատ մէկ համայնքը լիբանանեան հայրենիքին, բնականաբար պիտի կատարէ քաղաքացիական իր պարտքը, եւ ժողովրդավարութեան թոյլատրելի սահմաններուն մէջ պիտի դրսեւորէ իր ազատ կամքը: Նախասիրութիւններ՝ բնականաբար պիտի ըլլան, նախընտրութիւններ՝ նոյնպէս: Յատկանշական է, որ լիբանանահայութիւնը ընտրութիւններուն կը մասնակցի քաղաքական երկու գլխաւոր հոսանքներուն՝ Մարտ 14-ի եւ 8-ի մէջ ունենալով իր թեկնածուները: Իւրաքանչիւրը համոզուած իր ընտրանքին, քուէատուփերուն պիտի ներկայանայ սեփական հայեցողութեամբ եւ սեփական թեկնածուներով:

«Արարատ»-ի մեր նախորդ համարներուն մէջ, բազմիցս նշած ենք, թէ հայ քաղաքական հոսանքները Մարտ 8-ի կամ 14-ի գօրանցներուն մէջ գտնուելով հանդերձ, պատճառ մը չունին ազգային, ներ-հայկական բեմ փոխադրելու: Լիբանանի քաղաքական կեանքին մէջ իրենց որդեգրած այլազան դիրքորոշումները: Եթէ իսկապէս նախանձխնդիր ենք համայնքին միասնականութեան, բեմերէ ու ամպիոններէ ճառագոյնութիւններ, պորտախօսութիւններ կատարելէ առաջ, մենք՝ իբրեւ համայնքին միջոց ու ուղղութիւն տալու կոչուած տարրեր, պարտաւոր ենք հայ համայնքին ներքին համերաշխութիւնը, հանդարտութիւնը պահպանելու գնով գուսպ ու շրջահայեաց ըլլալ մեր յայտարարութիւններուն եւ արտայայտութիւններուն մէջ: Լիբանանի ընտրական մթնոլորտին աղտոտ լաթերը չփորձենք լուալ հայ համայնքի խաղաղ առօրեային մէջ: Թոյլատրելի չէ: Աններելի չէ: Տարակարծութիւններ ունենալ չի նշանակեր իւրաքանչիւր առիթով, բեմ բարձրանալ, հանրային կարծիքը թիրիմացութեան մատնել, անտեղի գրպարտութիւններ ու ամբաստանութիւններ կատարել, լարուածութիւն սերմանել: Անիմաստ է պարզապէս: Ընդհակառակը, Մարտ 14-էն եւ 8-էն վեր դիտենք հայ համայնքին շահերը եւ վստահութեան կամուրջները ամրապնդելու գործնական միջոցներու մասին խորհիլք: Դուրս գանք լուրջնաբանութեան բարոյնքէն, համեստ մարդոց զգացումները շահագործելէ: Խորհիլք, ապա՝ շարժիլք: Նախադասութիւն մը կրնայ վայրկեանին ծափեր խլել, բայց ո՞վ պիտի սրբագրէ ազգային կեանքին մէջ անոր ձեւերը: Ինչպէս մեր համայնքը:

Մէկ քանի առիթներով, մեր ընդդիմախօս կուսակցութեան, Յ.Յ. Դաշնակցութեան ընկերներուն փորձեցիք բացատրել, թէ հայկական երեսփոխանական պլոքի մը մասին ե՞րբ եւ ինչպէ՞ս կարելի պիտի ըլլայ գործնապէս մտածել: Բացատրեցիք, թէ այսօրուան դրութեամբ, քաղաքական հոսանքի մը գործունեայ (Մարտ 8) մէկ տարրը տրամաբանականօրէն, նաեւ՝ բարոյապէս ի վիճակի պիտի չըլլայ յանկարծ չեզոք դիրքերու վրայ կենալ, հայկական պլոքի մը կազմութեան մասին նախաձեռնութիւն տանան: Ի՞նչ հրաշք պատահեցաւ, որ Յ.Յ.Դ.Ն մոռնալով Մարտ 8-ի մէջ իրեն վստահուած դերակատարութիւնը յանկարծ պլոքի յանկարծ վնաս երգել... Բայց ըստ երեւոյթին մեր Դաշնակցական բարեկամները չեն փախքար հասկնալ կամ գէթ այդպէս կը ձեւանան: Դարձեալ կը հարցնենք, ինչպիսի՞ քաղաքական ուղղութիւն պիտի ունենայ Յ.Յ.Դ.Ն առաջդրած հայկական պլոքը եւ ո՞վ պիտի գլխաւորէ զայն, երբ չեզոք դիրքերէ մեկնող Յ.Յ.Դ. գործնապէս եւ քաղաքականապէս դարձած է Մարտ 8-ի ամենագործունեայ մէկ տարրը: Պայմանաւորութեան մասին կը խօսուի, երբ նոյնիման Յ.Յ.Դ.Ն բոլորէն աւելի լուրջ եւ խոր պայմանաւորութիւններուն մէջ կը խրի օրը օր: Երեսփոխաններու կշիռի մասին կը խօսուի, երբ ազատ կամքի բացակայութիւնը բոլորէն աւելի Յ.Յ.Դ.Ն-ի մօտ կ'աղաղակէ: Դո՛ւքներու վաճառքի մասին կը խօսուի, բայց Ալի Պապայի քարայրներուն մասին կը զգացուի խօսիլ: Մենք ուրախ պիտի ըլլայինք, որ հոգիներու վաճառքի ու կամքի ազատութեան մասին, խօսողները իրենք գործնապէս ապացուցէին, իրենց քաղաքական անկախութիւնը, որմէ ետք միայն փորձէին հակառակորդ նկատուած կողմը մեղադրել: Մենք զմեզ պիտի չարտօսէինք, լիբանանահայ համայնքին առջեւ այսպիսի տողերով հանդէս գալ:

Մենք, մեր Յ.Յ.Դ.Ն-ի բարեկամներն կը պահանջենք, լիբանանեան ընտրական մթնոլորտը, հեռու պահել հայ համայնքէն: Այդ, մէկը կատարելու լուսագոյն միջոցը, աժան արկածախնդրութիւններն ու բեմավարութեան հրաժարիլն է: Պէտք չէ մոլորեցնել լիբանանահայութիւնը եւ ատելութեան նոր սերմեր ցանել: Ընդհակառակը՝ պարտաւոր ենք, բեմը օգտագործել ընդգծելու, որ հակառակ քաղաքական տարակարծութիւններու առկայութեան (որոնք ժամանակի ընթացքին լուծելի կրնան դառնալ) լիբանանահայութիւնը միասնական է: Այսպէս պէտք է մօտենալ համայնքին շահերով իսկապէս մտահոգ քաղաքական որբէւ հոսանք:

ԱՅՐԱՐՈՆ ԾԽՐՏԸՄԵՆԱԿ

Ընտրական Լուրեր

ՏԱՐԲԵՐ ՇՐՋԱՆՆԵՐՈՒ ՄԵՋ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵՆԵՆ

Սնցնող օրերուն, կարգ մը շրջաններու մէջ գտնուող ընտրական քարոզչական պատահուներ խափանարարական աւարքներու ենթարկուեցան:

Այսպէս, Կալտէի եւ Ուբէյլէի միջեւ երկարող ծովեզերեայ ճամբուն վրայ, անձանօթ անձեր փծացուցին ընտրական աֆիշներ ու նկարներ, եւ այդպէս աննցմէ մաս մը, խորհրդարանական Մուսթաքպալ եւ Ազգային Ազատ հոսանքներուն պատկանող:

Պէլոյութի առաջին ընտրաշրջանին մէջ մարոնի աթոռի թեկնածու Նետիմ Ծեմայէլ քննադատեց «գորավար Միշէլ Աուսի կողմէ, հանրապետութեան նախագահ Միշէլ Սըլէյմանի նկատմամբ քարոզչական արշաւը»:

Ան ըսաւ. «Պէրքըի եւ պատրիարք Սֆէյրի դէմ խօսքերն ենք, առհասարակ լիբանանցիները եւ մասնաւորաբար քրիստոնեաները ակնատես եղան զօր. Աուսի կողմէ նոր քարոզչութեան մը, այս անգամ նախագահութեան դիրքին դէմ»:

ՊԵՅՐՈՒԹ

Երրորդ ընտրաշրջանին մէջ յոյն ուղղափառ աթոռի թեկնածու, նախկին նախարար Պշարա Մըրիտ, իր ունեցած ընտրական հաւաքներուն եւ հանդիպումներուն ընթացքին, մերժեց «ընտրական ստուգատեսին մէջ ճակատում բառը գործածել», նախընտրելով «մրցակցութիւն» բառը:

Մըրիտ ղիտել տուաւ, թէ «ճակատում արտայայտութիւնը կը կիրարկուի միայն Լիբանանի չարիք նիւթող սինիստական թշնամիի պարագային, մինչ մրցակցութիւնն է, որ կ'արտացոլցուց ընտրական մրցումի իրականութիւնը»:

«Լիբանանեան ժողովրդային Համագումար»-ի նախագահ Զամալ Շաթիլա, այսօր կէտորին, մամլոյ սենտիքայի կեդրոնատեղիին մէջ պիտի ունենայ մամլոյ ասուլիս մը, որուն ընթացքին «Համագումար»-ին կեցուածքը պիտի յայտնէ խորհրդարանական ընտրութեանց նկատմամբ:

Պէլոյութի երրորդ ընտրաշրջանին մէջ փոքրամասնութեանց աթոռի թեկնածու Էտմոն Պուրթոս այցելեց Մարոնի լիկայի կեդրոնատեղիին, ուր հանդիպում մը ունեցաւ անոր նախագահ ժողէֆ Թարապէյի հետ, ընդհանուր քարտուղար Սեմիր Զըպէլայի եւ գործադիր խորհուրդի անդամներ Էմիլ Ապի Նատրի եւ Անթուան Ուաքիմի ներկայութեամբ:

Երրորդ ընտրաշրջանին մէջ շիի աթոռի թեկնածու Ապպաս Եադի հաղորդագրութեան մէջ յայտնեց, թէ յետոյ կ'ողջ իր թեկնածութիւնը, յուսալով որ «ընտրութիւնները կը կայանան ամենայն ազատութեամբ եւ ժողովրդավարութեան մթնոլորտի մէջ»:

ԹՈՒՐԶ ԱՐՈՒԵՍԱԳԻՏՈՒՄ 1915-Ի ԴԷՊԵՐԵՐԸ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՆ ՈՐԱԿԵՑ

Թուրք երիտասարդ արուեստագիտուհի, վաստակաշատ դեպիան Իննա Պարոյի դստեր՝ Փէլին Պարոյի կողմէ արտասանուած անսպասելի խօսքերը, «Պատմութեան ետին սենեակները» անունով պատկերասփիռի յայտագրի ընթացքին, բողոքի այլք մը բարձրացուցին թէ՛ յայտագրի հաղորդակարգին ու միւս մասնակցին եւ թէ՛ ընդհանրապէս յայտագրին հետեւողներու լայն շրջանակներուն մօտ:

Արդարեւ, Փէլին Պարոյ, մասնակցելով Մուրատ Պարտաքըրի հաղորդակարգութեամբ սփռուած յիշեալ յայտագրին, ուր այս անգամ կը քննարկուէ Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններու ներկայ գործընթացը՝ 1915-ի դէպքերու լայն տակ, քանի մը անգամ «ցեղասպանութիւն» որակեց 1915-ի պատահարները եւ անմիջապէս քննադատութիւններու թիրախ դարձաւ: Հաղորդակարգ Մուրատ Պարտաքըր Պարոն ազարարեց ըսելով, որ թրքական կողմը «ցեղասպանութեան պնդումներ» քաջատրոփինը կը գործածէ, իսկ միւս մասնակցիդ՝ պատմաբան, դոկտ. Էրիան Աֆիոնճու, աւելի ծանր արտայայտութիւններ ունեցաւ:

Պարոյ իբրեւ պաշտպանութեան դիմադրող մը, ինչքան, թէ Հայաստան գացած ու հոն տեսակցութիւններ ունեցած է հոգեւորականներու ու ակադեմիականներու հետ: Հոս ալ հայկական տեսակէտներու կողմը «ցեղասպանութեան պնդումներ» քաջատրոփինը կը գործածէ, իսկ միւս մասնակցիդ՝ պատմաբան, դոկտ. Էրիան Աֆիոնճու, աւելի ծանր արտայայտութիւններ ունեցաւ: Պարոյ իբրեւ պաշտպանութեան դիմադրող մը, ինչքան, թէ Հայաստան գացած ու հոն տեսակցութիւններ ունեցած է հոգեւորականներու ու ակադեմիականներու հետ: Հոս ալ հայկական տեսակէտներու կողմը «ցեղասպանութեան պնդումներ» քաջատրոփինը կը գործածէ, իսկ միւս մասնակցիդ՝ պատմաբան, դոկտ. Էրիան Աֆիոնճու, աւելի ծանր արտայայտութիւններ ունեցաւ:

Քարոզչութիւնը չէ, որ կ'ընէ, այլ իր անձնական կարծիքը կը յայտնէ ու կը փորձէ ընդգծել, թէ ինչպիսի՞ սեմ որբերգութիւն մը պատահած էր 1915-ին:

Անսպասելի այս խօսքերուն իբրեւ պատասխան, յայտագրին հետեւողները սկսան անմիջապէս բողոքներով ու սպառնալիքներով լեցուն համացանցային մասնակցող ուղարկել, մեղադրելով նաեւ, որ Պարոյ իր վիզէն անցուցած էր նման խորհրդակցիչով շղթայ մը: Փէլին Պարոյ այս մեղադրանքներուն դիմաց պաշտպանեց ինքզինքն ու ըսաւ, որ այդ, Հայաստանէն գնամ է այդ շղթան, որովհետեւ նուոր իր ամէնէն սիրած պտուղն է: «Որքա՞ն անօթ է: Կը խօսիլք երկու ժողովուրդներու բարեկամութեան ու յարաբերութիւնները բնականօրէն հունի մէջ դնելու մասին, իսկ մարդիկ նուոր մը համար աղմուկ կը բարձրացնեն», ըսաւ երիտասարդ արուեստագիտուհին:

Մուրատ Պարտաքըր, փորձելով պաղ ջուր լեցնել Պարոյի այս լատտետութեան վրայ՝ յիշեցուց «ԱՄՄԱ»-ի կողմէ սպաննուած թուրք դիւանագետներուն մասին, իսկ Պարոյ ըսաւ, որ ինք բողոքէն աւելի ապրած է այդ սարսփելի շրջանը: «Հայրս դիւանագետ էր եւ ես ամէն օր հայրս կորսնցնելու վախն է, որ սարքեցայ փոքր տարիքս սկսեալ: Հօրս ամէնէն մտերիմ ընկերները սպաննուեցան «ԱՄՄԱ»-ի կողմէ, սակայն առիթա չի նշանակեր, որ ես բշնամութեամբ պիտի լեցուիմ հայերու դէմ», նշեց Փէլին Պարոյ:

ԼԵՆԱԼԻԱԿԱՆ

«Լիբանանեան ժողովրդավարական վերածնունդ» շարժումի պետ Հասան Մուսլա հաղորդագրութեամբ մը դիտել տուաւ, թէ «Լիբանան, երեսփոխանական ընտրապայքարի ծիրէն ներս, կորսնցուց խումբ մը մարդիկ, որոնք կրնային հարըստացնել խորհրդարանն ու օրէնսդրական աշխատանքը: Այդ մարդոց գլխաւորն է Ֆրանսուա Պասիլը», որ յետոս կոչեց իր թեկնածութիւնը:

Նախկին նախարար Ֆարես Պուէլզ ըսաւ, թէ Շարթաթ օրուան իր ունեցած մամլոյ ասուլիսէն ետք զօրակցական նամակ մը ստացած էր Լիբանանեան Ուժերու գործադիր խորհուրդի նախագահ Սամիր Ժաաժայէն: «Այ Տիար» օրաթերթը կը գրէ, թէ Քասրուանի մէջ արդէն իսկ կազմուած է Միշէլ Աուսի գլխաւորած ընտրացանկին դէմ մրցող նոր ընտրացանկ մը, որ կ'ընդգրկէ Մանսուր Պոնի, Ֆարիտ Զէյելի, Ֆարես Պուէլզի, Գարլոս Էտտէի, Սըքրան Դագի-ի անունները: Ընտրական մթնոլորտին մէջ մասնակցութիւն կը ցուցնէ «Այ Սաֆիր» օրաթերթին համաձայն, Մուսթաքպալ հոսանք խորհրդարանական հոսանքի նախագահ Սաատ Հարիրիի հետ իր ունեցած հանդիպումէն ետք, նախկին նախարար Մուսլէ Տալլոյ յառաջիկայ ժամերուն պիտի որոշէ Զահլէի մէջ իր որդեգրելիք քայլերուն ընթացքը: Տեղական «Այ Անպա» օրաթերթը կ'ակնարկէ, թէ Տալլոյ պարզապէս ընտրական զինակցութիւն մը կը փնտռէ խորհրդարանական մեծամասնութեան հետ: Տեղական «Այ Լիուա» օրաթերթին կարծիքով, խորհրդարանական մեծամասնութիւնը՝ շարթաթաւորելի պիտի յայտարարէ Զահլէի ընտրաշրջանին մէջ իր ընտրացանկը: Դարձեալ ընտրական մթնոլորտին մէջ մնալով, Մարտ 14-ի ուժերուն ընդհանուր քարտուղարութեան համակարգող Ֆարես Մուէլտ յայտնեց, թէ նախագահ Միշէլ Սըլէյման անմիջական ոչ մէկ միջատուութիւն կը կատարէ խորհրդարանական ընտրութիւններու գործընթացին մէջ, սակայն անկայն թեկնածուներու համալրանքը մեծամասնութեամբ կ'երթայ նախագահին ուղղութեամբ:

ՊԵՐԱՍ

Արեւմտեան Պեքա-Ռաշայա ընտրաշրջանին մէջ տիրոգի համայնքի պատկան աթոռի թեկնածու, նախկին երեսփոխան Ֆէյալ Տաուուտ, Ռաշայայի մէջ կայացած ժողովրդային հանդիպումներու ընթացքին հաստատեց, թէ «ընդդիմութիւնը յանձնառու է թաւփի համաձայնութեան եւ չի մտածեր զայն փոխարինողի մը մասին»:

ՀԱՐԱՄԱՅԻՆ ԼԻԲԱՆԱԿ

Ճեզգիկի շրջանին մէջ յոյն կաթողիկէ համայնքի պատկան աթոռի թեկնածու Իսամ Հաստատ հաստատեց, թէ ինք կը շարունակէ իր թեկնածութիւնը, շեշտելով «ընտրողին եւ թեկնածուին միջեւ հաղորդակցութիւնը շրջանի մը մէջ, որ խիստ կարիքը ունի շրջանի բոլոր ուժերուն զօրակցութեան»:

ՀԻՍԻՍԱՅԻՆ ԼԻԲԱՆԱԿ

Թրիփոլիի ընտրաշրջանին մէջ մարոնի համայնքի պատկան աթոռի թեկնածու ժորժ Շապթիկ, Թրիփոլիի «Ընալիթի ինս» պակտիկին մէջ կայացած մամլոյ ասուլիսի մը ընթացքին, ներկայացուց իր ընտրական յայտագիրը: Ան հաստատեց իր թեկնածութեան շարունակումը «առ ի պահպանում» Թրիփոլիի մարոնի համայնքի իրաւունքներուն, շեշտելով այն անհրաժեշտութիւնը, որ քաղաքն ու համայնքը ներկայացուցին անոնց զգաւակներէն սեկուն միջոցաւ»:

ՀԱՅԿԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՆԱԼ ՊԱՆՏԵԱՆ ՄԱՍՆԱԿՑԵՑԱԻ ՄԱՏՐԻՏԻ ԺՈՂՈՎԻՆ

Հայաստանի արտաքին գործոց նախարար Էտուարտ Նալպանեան 12 Մայիսին մասնակցեցաւ Մատրիտի մէջ կայացած Եւրոպայի խորհուրդի նախարարներու խորհուրդի 119-րդ նիստին, որ կայացաւ Եւրոխորհուրդի ստեղծման 60-ամեակի միջոցառումներու ծիրէն ներս:

Յիշեալ նիստին ելոյթ ունեցաւ նաեւ Նալպանեանը, որ իր խօսքին մէջ ընդգծեց Եւրոխորհրդի դերը կայուն եւ խաղաղ մայրցաղաք կառուցելու գործին մէջ: Ան անդրադարձաւ նաեւ դարաբաղեան հիմնախնդրի կարգադրման գործընթացին նշելով, թէ իր անվտանգութիւնը ապահովելու Արցախի ժողովուրդին մտահոգութիւնը ինկնած էր ինքնորոշման իրաւունքի օրինական պահանջի հիմքին մէջ:

Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահներուն հանդիպումները, 2008 թուականին Մոսկուայի եւ Հելսինքիի մէջ ընդունուած հռչակագիրն ու յայտարարութիւնները Նալպանեանի կողմէ գնահատուեցան որպէս խաղաղութեան գործընթացին մէջ յառաջիկայ քայլի նախաձեռնումներ:

Նալպանեան յոյս յայտնեց, որ եթէ Ատրպէյճանի ղեկավարութիւնը հրաժարի իր ապակառուցողական մօտեցումներէն եւ դադարեցնէ ռազմատեղի ու ռայտաեց քարոզչութիւնը, կայա Սիւնքի խումբի շրջանակներով ընթացող բանակցութիւնները կրնան կողմնորոշուի դիրքորոշումները մօտեցնել եւ յանգեցնել խնդրի կարգադրման:

ԵՐՏՈՂԱՆ. «ԹՈՒՐԶԻՆ ՊԻՏԻ ԸՆԴՈՒՆԱԿԵ ՊԱՇՏՊԱՆԵԼ ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ԸՆԿԵՐ»

Անգարայէն Պարոյ մեկնելէն առաջ Թուրքիոյ վարչապետ Ռեճեպ Թայիբ Էրտողան յայտարարեց, թէ «Թուրքիան պիտի շարունակէ պաշտպանել Ատրպէյճանի շահերը»: Ֆրանսական մամլոյ գործակալութեան համաձայն, Էրտողան ըսած է, թէ Ատրպէյճան իր այցելութեան նպատակն է «վերացնել Թուրքիոյ քաղաքականութեան առեւտրութեամբ թիրաբնութեանը եւ թիրաբնակարարութեանը, աւելցնելով, թէ Ատրպէյճանի շահերը առաջնահերթութիւն կը մնան պաշտօնական Անգարայի համար»:

Ատրպէյճանը վերջին շրջանին անհանգստացած է հայ-թրքական հաշտեցման եւ Հայաստան-Թուրքիա սահմանի բացման հեռանկարով: Անցեալ շաբաթավերջին Էրտողան յայտարարած էր, թէ Թուրքիան կրնայ բանալ Հայաստանի հետ սահմանը այն պարագային, երբ Հայաստան իր ուժերը դուրս պիտի հանէ Լեռնային Ղարաբաղէն: «Թուրքիան կրնայ սահմանը բանալ եթէ Հայաստան վերջ տայ Լեռնային Ղարաբաղի իր գրաւումին», շեշտած էր Թուրքիոյ վարչապետը:

ՕՂԱՍՊԵՆ. «ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԻՆՏԱԳՐԸ ԼԻԱԶՕՐԵՑԻՆԵՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐՈՒ ԹՂԹԱԾՐԱՐԿ»

Պետական նախ